ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 68-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 22 փետրվարի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող կողմի ներկայացուցիչ Ա. Ջեյնալյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց ««Հանրապետություն» կուսակցության դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Հանրապետություն» կուսակցության՝ 07.09.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007 թվականի նոյեմբերի 28-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի դեկտեմբերի 10-ին եւ ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Ճանաչման հայցը» վերտառությամբ 68-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 3-րդ մասը սահմանում է.

«Ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչելու այլեւս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ գործողությունը, եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, այսինքն՝

1) առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ.

2) հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում, կամ

3) դա նպատակ է հետապնդում վերականգնելու հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ դիմողը 16.11.2009թ. հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ կառավարության՝ վերջինիս անգործությունը ոչ իրավաչափ (անվավեր) եւ միավորումների, արտահայտվելու ազատության, խտրականությունից զերծ լինելու, պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքների խախտման փաստերը ճանաչելուն պարտավորեցնելու պահանջների մասին: ՀՀ վարչական դատարանի՝ 23.11.2009թ. «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշմամբ ներկայացված հայցադիմումի ընդունումը մերժվել է (Վարչական գործ թիվ ՎԴ/4816/05/09/):

ՀՀ վարչական դատարանի վերոհիշյալ որոշումը 01.12.2009թ. բողոքարկվել է եւ ՀՀ վարչական դատարանը 04.12.2009թ. կոլեգիալ կազմով կայացված՝ «Բողոքը մերժելու մասին» որոշմամբ ներկայացված բողոքը մերժել է: ՀՀ վարչական դատարանի՝ 04.12.2009թ. կոլեգիալ կազմով կայացված՝ «Բողոքը մերժելու մասին» որոշումը 21.12.2009թ. բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան: ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 10.02.2010թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ ներկայացված վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի՝ իր կողմից վիճարկվող 3-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներին: Այդ առնչությամբ դիմողը կարեւորել է վիճարկվող իրավանորմում ՀՀ Սահմանադրության հիշյալ հոդվածներով նախատեսված դատական պաշտպանության իրավունքի եւ դրա արդյունավետ իրացումն ապահովող, ի մասնավորի՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի շրջանակներում կարեւորված՝ որոշակիության, մատչելիության եւ արդյունավետ միջոցների իրավական չափորոշիչների երաշխավորվածության հարցը:

Վկայակոչելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված «վարչարարություն» եզրույթի սահմանումը, ինչպես նաեւ նույն օրենքի 69 եւ 96-րդ հոդվածները՝ դիմողը եզրակացնում է, որ դատավարական օրենսգիրքը պետք է նախատեսի համապատասխան իրավակարգավորում՝ վարչական մարմնի **անգործությունը** ոչ իրավաչափ ճանաչելու հայցով վարչական դատարան դիմելու իրավունքն ապահովելու համար: Մինչդեռ, նրա պնդմամբ, փվյալ գործով վարչական դատարանը սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթներին տվել է այնպիսի մեկնաբանություն, ըստ որի՝ վարչական մարմնի անգործությունն անվավեր ճանաչելու հայցապահանջով հայցը դատարանն իրավասու չէ վարույթ ընդունել:

Ի թիվս վերոնշյալի՝ դիմողը, վկայակոչելով «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածը, ինչպես նաեւ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի R2004(20) հանձնարարականում ամրագրված «վարչական ակտ» եզրույթի սահմանումը, տեսակետ է արտահայտել այն մասին, որ եթե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասում գոր-

ծածված «վարչական ակտ» եզրույթը ներառում է «գործողություն» ակտը եւս, ապա այլեւս անիմաստ է երեք ակտերը միասին մեկ եզրույթով հիշատակելուց զատ առանձին հիշատակել նաեւ դրանցից մեկը: Նրա կարծիքով՝ դա ստեղծում է անորոշություն, ինչպես նաեւ երկիմաստ ու հայեցողական մեկնաբանությունների հնարավորություն է տալիս, որը հակասում է իրավական որոշակիության սկզբունքին:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ պետությունը կարող է կանոնակարգել դատական պաշտպանության իրավունքի իրականացման ընթացակարգը, մեխանիզմներն ու ժամկետները՝ այդ իրավունքը կրողին ներկայացնելով օրենսդրական ամրագրում ստացած հստակ պայմաններ: Պատասխանողը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 65-68-րդ հոդվածների համադրված վերլուծության արդյունքներով եզրակացնում է, որ օրենսգիրքը հստակ սահմանում է այն բոլոր իրավական մեխանիզմները, որոնք ապահովում են ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացումը:

Միաժամանակ, վերլուծելով գործի փաստական հանգամանքները, պատասխանողը գտնում է, որ դիմողը չի իրացրել դատական պաշտպանության իրավունքի կենսագործմանն ուղղված՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված իրավական բոլոր միջոցները:

Պատասխանողը միջնորդում է նաեւ գործի վարույթը կարճել այն պատճառաբանությամբ, որ վիճարկվող դրույթը դիմողի նկատմամբ չի կիրառվել, եւ վիճարկվող նորմի սահմանադրականության հարցի բարձրացումը, ըստ էության, չի հետապնդում սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության նպատակ:

5. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ գործի վարույթը կարճելու հիմքեր չկան, եւ հաշվի առնելով, որ դիմողը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում կիրառվող եզրութաբանությունը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականությունը վիճարկում է դրանում առկա հասկացությունների սահմանադրաիրավական բովանդակության առումով, հարկ է համարում առաջին հերթին անդրադառնալ նշված օրենքում վարչական ակտ, գործողություն եւ անգործություն հասկացությունների տարանջատման խնդրին:

«Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ինչպես ընդհանուր իրավակարգավորման առարկայի, այնպես էլ առանձին նորմերի (2-րդ հոդվածի 2-րդ մաս, 3-րդ հոդված, 69-րդ հոդված, 71-րդ հոդվածի 1-ին մաս, 76-րդ հոդված, 96-րդ հոդված, 101-րդ հոդված, 102-րդ հոդված, 108-րդ հոդված) համադրված վերլուծությունը վկայում է, որ այդ օրենսդրական ակտում հստակ տարբերակում է կատարված **վարչական ակտ, գործողություն եւ անգործություն** եզրույթների միջեւ՝ դրանցից յուրաքանչյուրին ներհատուկ բովանդակությանը համապատասխան: Օրենքի 69-րդ հոդվածում գործածվող «**ակտ**» եզրույթի կիրառմամբ օրենսդիրը չի նույնացրել հիշյալ երեք եզրույթները՝ դրանք ներկայացնելով որպես «**վարչական ակտ**»: Նշված հոդվածի վերլուծությունը վկայում է, որ վերջինիս իրավակարգավորման առարկայի իմաստով պարզապես «**ակտ**» եզրույթն օգտագործվել է որպես հավաքական հասկացություն, ինչը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 65-68, 70-72, 114, 145, 154-156, 158-րդ հոդվածների իրավակարգավորման շրջանակներում, չի կարող հիմք հանդիսանալ նշված եզրույթների նույնացման համար:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը կարեւորում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իրավակարգավորման տրամաբանության բացահայտումը՝ դատարանի մատչելիության եւ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների ապահովման տեսանկյունից:

Այս առումով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ ՍԴՈ-719, ՍԴՈ-721, ՍԴՈ-780, ՍԴՈ-844, ՍԴՈ-882 որոշումներում կարեւորել է վարչական մարմինների **անգործության** դեմ դատական պաշտպանության անհրաժեշտությունը, առանց որի լիարժեք չի լինի իրավունքների եւ ազատությունների պաշտպանության համակարգը:

Անդրադառնալով ՀՀ օրենսդրության, մասնավորապես՝ վարչական դատավարության օրենսգրքի իրավակարգավորման տրամաբանության բացահայտմանը՝ սահմանադրական դատարանը, օրենսգրքի հոդվածների համակարգային վերլուծության հիման վրա, արձանագրում է, որ օրենսդիրը նպատակ է հետապնդել վարչական արդարադատության համակարգում սահմանելու այնպիսի իրավական կարգավորում, որը կերաշխավորի անձանց դատական պաշտպանության իրավունքի լիարժեք եւ արդյունավետ իրականացումը **ոչ միայն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից ընդունվող վարչական եւ նորմատիվ ակտերի, նրանց գործողությունների,** այլեւ նրանց **անգործության** դեմ: Շարունակելով նշված տրամաբանության հետեւողական իրացումը՝ օրենսդիրը,

որպես օրենսգրքի 1-ին եւ 3-րդ հոդվածների արդյունավետ իրացումն ապահովող իրավական երաշխիք, օրենսգրքում ներառել է «Գործի քննությունը եւ լուծումը վարչական դատարանում» վերտառությամբ երկրորդ բաժինը եւ վերջինիս ներքո՝ «Գործ հարուցելու հիմքը եւ հայցի տեսակները» վերտառությամբ 11-րդ գլուխը: Այն նախատեսում է վարչական դատարան ներկայացվող հայցերի հետեւյալ տեսակները՝ **վիճարկման** հայց (օրենսգրքի 65-րդ հոդված), **պարտավորեցման** հայց (օրենսգրքի 66-րդ հոդված), **գործողության** կատարման հայց (օրենսգրքի 67-րդ հոդված) եւ **ճանաչման** հայց (օրենսգրքի 68-րդ հոդված), որոնց միջոցով անձինք անմիջականորեն ձեռնամուխ են լինում իրենց խախտված իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանությանը:

Նշված հայցատեսակների՝ օրենսգրքի 65-67-րդ հոդվածների ուսումնասիրությունը վկայում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից դրսեւորվող **անգործության** արդյունքում անձանց խախտված իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանությունը երաշխավորելուն է կոչված ինչպես պարտավորեցման, այնպես էլ գործողության կատարման հայցը: Ընդ որում՝ պարտավորեցման հայցի դեպքում դատական պաշտպանությունն իրականացվում է ընդդեմ այնպիսի անգործության, որն **առնչվում է վարչական ակտի ընդունմանը**, իսկ գործողության կատարման հայցի դեպքում՝ այնպիսի անգործությանը, որը **չի առնչվում վարչական ակտի ընդունմանը:**

Ավելին, վարչական դատավարության օրենսգրքի այն ընդհանուր տրամաբանությունը, որ վարչական արդարադատության շրջանակներում հավասարապես պետք է ապահովվի դատական պաշտպանությունը նաեւ ընդդեմ վարչական մարմինների եւ պաշտոնատար անձանց անգործության, իր հետեւողական արտացոլումն է գտել նաեւ Վարչական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածում, որտեղ օրենսդիրը «վարչական ակտ» եւ «գործողություն» եզրույթների հետ մեկտեղ օգտագործում է նաեւ «**անգործություն**» եզրույթը՝ այն տարածելով նաեւ **ճանաչման հայցի վրա:**

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, ի տարբերություն օրենսգրքի 1-ին, 3-րդ եւ 70-րդ հոդվածների, օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասում դրսեւորվել է անհետեւողական մոտեցում՝ «վարչական ակտ» եւ «գործողություն» եզրույթների հետ մեկտեղ չի շեշտվել «անգործություն» եզրույթը: Սակայն օրենսգրքի իրավակարգավորման տրամաբանությունից բխում է, որ այն իրավակիրառական

պրակտիկայի կողմից չպետք է մեկնաբանվի ի վնաս մարդկանց իրավունքների պաշտպանության:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ **ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասն օրենսգրքի այլ նորմերի համակարգային վերլուծության տրամաբանությամբ ենթադրում է նաեւ վարչական մարմնի անգործության դեմ դատական պաշտպանության դեպքերը,** եւ իրավակիրառողը պետք է ելնի օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավանորմի նման մեկնաբանությունից, հաշվի առնելով, որ.

ա/ օրենսգրքի 1-ին եւ 3-րդ հոդվածներով սահմանված՝ օրենսդրի նպատակից եւ իրավակարգավորման ուղղվածությունից բխում է, որ նշված հոդվածները դատական պաշտպանության հնարավորություն են նախատեսում նաեւ վարչական մարմնի **անգործության** պարագայում,

բ/ օրենսդիրն օրենսգրքի 70-րդ հոդվածում «վարչական ակտ» եւ «գործողություն» եզրույթների հետ մեկտեղ **ճանաչման հայցին է հավասարապես վերագրում նաեւ «անգործություն»** եզրույթը:

6. ՀՀ սահմանադրական դատարանը միաժամանակ հարկ է համարում արձանագրել, որ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի վիճարկվող 3-րդ մասով սահմանված ճանաչման հայցի առարկային բնորոշ է հետեւյալ առանձնահատկությունը. ճանաչման հայցի առարկայի շրջանակներում օրենսդիրը հնարավորություն է ընձեռում վիճարկել այն միջամտող վարչական ակտերի կամ գործողությունների (անգործության) իրավաչափությունը, որոնք **այլեւս իրավաբանական ուժ եւ նշանակություն չունեն դրանց հասցեատիրոջ համար:** Ընդ որում, նման հայց ներկայացնելու դեպքում հայցվորը պետք է հետապնդի օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերում նշված խնդիրների լուծման նպատակ:

Վերոհիշյալ առանձնահատկությունը վկայում է, որ օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասը հանդես է գալիս որպես իրավունքների պաշտպանության առանձին ինստիտուտ, որն իր իրավակարգավորման առարկայով եւ հետապնդվող նպատակներով բովանդակային առումով տարբերվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-67-րդ հոդվածների հիման վրա տրամադրվող դատական պաշտպանության ինստիտուտից, եւ եթե վերջիններիս շրջանակում դատական պաշտպանությունն իրականացվում է ընդդեմ անձի համար իրավաբանական ուժ եւ նշանակություն ունեցող ակտերի, ապա օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի պարագայում

դատական պաշտպանությունն իրականացվում է ընդդեմ անձի համար **այլեւս իրավաբանական ուժ եւ նշանակություն չունեցող ակտերի, այսինքն՝ այնպիսի ակտերի, որոնք իրենց ընդունմամբ, կատարմամբ կամ դրսեւորմամբ հասցեատիրոջ համար ուղղակի իրավական հետեւանք չունեն:**

7. ՀՀ սահմանադրական դատարանը, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասին համապատասխան, հարկ է համարում անդրադառնալ նաեւ վիճարկվող նորմի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի սահմանադրականության հարցին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտի տեսակները» վերտառությամբ 114-րդ հոդվածի 1-ին մասն սպառիչ կերպով թվարկում է վարչական գործով կայացվող՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի տեսակները: Ընդ որում, նշված դատական ակտերի տեսակները թվարկող դրույթները միաժամանակ առնչվում են վարչական դատարանի լիազորություններին: Այդ կապակցությամբ սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաեւ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասը, արձանագրում է, որ դատարանների համար օրենքներով սահմանված համապատասխան լիազորությունների առկայությամբ եւ դրանց իրացմամբ է, որ հնարավոր է դառնում երաշխավորել անձանց՝ դատարանի մատչելիության, արդյունավետ դատական պաշտպանության եւ արդար դատաքննության իրավունքները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի ուսումնասիրությունը վկայում է, որ այն կոչված է ապահովելու, մասնավորապես, օրենսգրքի 65-68-րդ հոդվածների իրացումը՝ երաշխավորելով նշված հոդվածների շրջանակներում ներկայացված հայցապահանջների առնչությամբ արդարադատության իրականացումը: Մասնավորապես, օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը համակարգային առումով փոխկապակցված է օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի հետ, եւ կոչված է ապահովելու այլեւս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու՝ հայցվորի իրավունքի իրականացումը: Մինչդեռ, ի տարբերություն օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի, որտեղ վարչական ակտից զատ նախատեսված է նաեւ վարչական մարմնի գործողությունը (վերոնշյալ իրավական դիրքորոշումների շրջանակներում՝ նաեւ անգործությունը) վիճարկելու հնարավորությունը, ինչպես նաեւ ի խախտումն օրենս-

գրքի, մասնավորապես, 1-ին, 3-րդ եւ 70-րդ հոդվածների իրավակարգավորման տրամաբանության, օրենսգրքի 114-րդ հոդվածը վարչական դատարանին վերապահում է համապատասխան լիազորություն **միայն վարչական ակտի առնչությամբ:** Արդյունքում՝ հաշվի առնելով նաեւ, որ օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասն առնչվում է վարչական դատարանի լիազորություններին, եւ վարչական դատարանը, ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան, կարող է գործել միայն Սահմանադրությամբ եւ օրենքով հստակ սահմանված լիազորությունների շրջանակում, սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված դրույթը վարչական մարմնի գործողությունը եւ անգործությունը վիճարկելու մասով արգելափակում է օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման հնարավորությունը՝ պատճառ հանդիսանալով ինչպես դատարանի մատչելիության, արդյունավետ դատական պաշտպանության եւ արդար դատաքննության սահմանադրական իրավունքների խախտման, այնպես էլ պետության արդարադատական գործառույթի արգելափակման:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում՝ հաշվի առնելով նաեւ վարչական մարմնի անգործության դեմ դատական պաշտպանության հնարավորությունը:

2. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետն այն մասով, որը վարչական ակտի հետ մեկտեղ չի ներառում վարչական մարմնի գործողությունը եւ անգործությունը, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

22 փետրվարի 2011 թվականի
ՍԴՈ- 942